ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 64-23

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

քաղ. Երևան 17.02 2023 թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեն, ի դեմս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղար Կարեն Սարգսյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Քոնսեփթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ի դեմս գլխավոր տնօրեն Անգինե Փրամզյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի Պետական բյուջեի մասին» 2022 թվականի դեկտեմբերի 08-ի ՀՕ-455-Ն ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի Պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի «Մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» N 33-Ա հրամանը և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 9-ի «2023 թվականի Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը ծրագիրը, 2023 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N 2024-Ա հրամանի (այսուհետ՝ ծրագիր) N2 հավելվածի 2.10 կետով նախատեսված «**Armenia.travel վեբ կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում»** միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ սահմանված 1190 «Զբոսաշրջության զարգացման» ծրագրի 11002 «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» միջոցառմամբ նախատեսված՝ գումարից 12709900 (տասներկու միլիոն յոթ հարյուր ինը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումար (առանց ԱԱՀ), իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում N1-ում և կիրականացվեն պետական մարմնի գրավոր պատվերի հիման վրա:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը (հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հանձնման-ընդունման ակտի՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին, ինչպես նաև համապատասխան հանձնաժողովի ներկայացրած եզրակացության հիման վրա: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 12-ը, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և (կամ) ժամկետներ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2023 թվականի փետրվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության

հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված N5):

9.2 այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ mineconomy.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտե Հասցեն՝ 0010 ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն h/h 900011010379 ՀՎՀՀ 02698604	«Քոնսեփթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Վ. Անտառային փ., 11 շ., 8 տարածք «Կոնվերս Բանկ» ՓԲԸ h/h 1930044795910100 ՀՎՀՀ 00118447
Գլխավոր քարտուղար՝ Կարեն Սարգսյան	Գլխավոր տնօրեն Անգինե Փրամզյան
---------- (ստորագրություն) Կ.Տ.	---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1

2023 թ. 02 17 -ին

կնքված N 64-23 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականաց-ման վերջնաժամ-կետը	Հաշվետ-վության ներկայաց-ման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Armenia.travel վեբ կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում	www.armenia.travel կայքի տեխնիկական սպասարկում և ղեկավարում	1. Նախագծի տեղադրման համար Դիջիթալօուշն (Digitalocean) հարթակից սերվերի ձեռքբերում անհրաժեշտ պարամետրերն են՝ • *Օպերատիվ հիշողություն 16GB* • *Պրոցեսոր vCPUs 4vCPUs* • *Ինֆորմացիայի փոխանակում Transfer 4TB* • *Հիշողության կրիչ SSD 50GB* 2. **Վիմեո (Vimeo)** վիդեոների հարթակից պլյուս (Vimeo plus) փաթեթի տարեկան բաժանորդագրություն, որը հնարավորություն է տալիս շաբաթական 50 ԳԲ-ի վիդեո տեղադրելու համար (12 ամիս) 3. **Պլեսկ (Plesk)** սերվերի մենեջմենթի համար նախատեսված համակարգի վեբ ադմին էդիշընն (Web Admin edition) փաթեթի տարեկան բաժանորդագրություն, (12 ամիս) 4. Դոմեյն տարեկան վճարում Նետիմ (Netim) ընկերությանը (12 ամիս) 5. Մեյլչիմփ (Mailchimp) թվային մարքեթինգային գործիքի ստանդարտ (Standart) փաթեթի բաժանորդագրություն 6000 էլ. նամակների միաժամանակյա ուղարկման հնարավորությամբ (12 ամիս) 6. Քյու ար թայգր (QRTIGER) QR կոդերի գեներացման թվային հարթակից Advanced փաթեթի բաժանորդագրություն 200 դինամիկ/փոփոխվող QR կոդերի գեներացման հնարավորությամբ (12 ամիս) 7. Գուգլ ուան (Google one) ամպային սերվերի պրեմիում (premium) փաթեթի բաժանորդագրություն 2 Tb հիշողության հնարավորությամբ (12 ամիս) 8. Քլաուդֆեիր (Cloudfare) անվտանգության համակարգի կցում **1-8 կետերը կարող են դիտարկվել նաև այլ համարժեք հարթակի համարժեք փաթեթը* **Կայքի սպասարկման ծառայություն, այդ թվում՝** *Կայքի տեխնիկական սպասարկման ծառայություն* *Կայքի անխափան աշխատանքի և որակի հսկողություն* *Կոնտենտից առաջացած սխալների հայտնաբերում և ուղղում* *Բրաուզերների (Browsers: Chrome, Safari, Firefox) թարմացման հետևանքով առաջացած սխալների հայտնաբերում և ուղղում* *Սերվերի ընթացիկ աշխատանքի արդյունքում առաջացած սխալների հայտնաբերում և ուղղում* *Կայքի ամենամսյա արխիվացում և պահպանում* *Անհրաժեշտության դեպքում պահոցում առկա արխիվի վերականգնում*	Դիջիթալօշն (Digitalocean), **Վիմեո (Vimeo), Պլեսկ (Plesk), Նետիմ (Netim) Մեյլչիմփ (Mailchimp), Քյու ար թայգր (QRTIGER), Գուգլ ուան (Google one), Քլաուդֆեիր (Cloudfare)** հարթակների բաժանորդագրությունների կամ փաթեթների ապահովում 12 ամսվա համար պայմանագրով և տեխնիկական հանձնարարությամբ նախատեսված պայմաններով և պարամետրերով: Կայքի անխափան, արագ, անսխալ աշխատանքի, հասանելիության ապահովում տեխնիկական հանձնարարության և պայմանագրով սահմանված գործողությունների որակյալ իրականացման միջոցով: Թերությունների արագ շտկում Կայքի բովանդակության տեղադրում և փոփոխություն տեխնիկական հանձնարարությամբ և պայմանագրով սահմանված	2023թ. դեկտեմ-բերի 12	ըստ կատար-ման ընթացքի	12709.9 (առանց ԱԱՀ)

			SSL սերտիֆիկատի տեղադրում *Կայքի ամսական վիճակագրության տրամադրում* *Cloudflare համակարգի կցում կայքին, որը ապահովում է որոշակի անվտանգության պայմաններ* *Կայքի ֆունկցիոնալ մասերի ստուգում և խնդիրների դեպքում դրանց լուծում* **Կայքի բովանդակության տեղադրման և փոփոխության ծառայություն այդ թվում՝** *Ամսական 5 էջերի բովանդակության փոփոխություն (12 ամիս)* *Ամսական 5 նոր տրված հոդվածների տեղադրում (12 ամիս)* *Ամսական 10 նոր տրված միջոցառումների տեղադրում* *Ամսական 10 բլոգ հրապարակումների տեղադրում (12 ամիս)* *Նոր կամ փոփոխված կոնտենտի մեջ առկա նկարների և վիդեոների մշակում և օպտիմիզացիա (12 ամիս)* *Ըստ անհրաժեշտության հոդվածների, միջոցառումների բլոգ հրապարակումների հեռացում*	գործողություններով և պայմաններով:			
Տեխնիկական հանձնարարությամբ և պայմանագրով նախատեսված բոլոր գործողությունների իրականացումը հարկ է համաձայնեցնել Հրատարակչության Կոմիտեի հետ: *Հրատարակչության Կոմիտեն իրավունք ունի փոխարինելու ծրագրով նախատեսված գործողություններն ու ծառայություններն այլ համարժեք գործողություններով և ծառայություններով:* *Տեխնիկական հանձնարարությամբ և պայմանագրով նախատեսված ծրագրերի ու հարթակների փաթեթները կարող են փոխարինվել այլ համարժեք ծրագրերի ու հարթակների համարժեք փաթեթներով:*							
Ընդամենը՝							*12709.9*

Պետական մարմին
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
Հրատարակչության կոմիտե
Հասցեն՝
0010 ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
հ/հ 900011010379
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար՝
Կարեն Սարգսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կազմակերպություն
«Քոնսեփթ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն
Հասցեն՝
ՀՀ, ք.Երևան, Վ. Անտառային փ., 11 շ.,
8 տարածք
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
հ/հ 1930044795910100
ՀՎՀՀ 00118447
Գլխավոր տնօրեն՝
Անգինե Փրամզյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2

2023 թ. 02 17 -ին

կնքված N 64-23 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

2.3 Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.4 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.5 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.6 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Հավելված 3
2023 թ. 02 17 -ին

կնքված N 64-23 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծրագրի անվանումը՝ Armenia.travel վեբ կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում

ՀՀ հազար դրամ

Միջոցառման															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	99999999/4	Armenia.travel վեբ կայքի սպասարկում և կառավարում, թվային առցանց գործիքների ձեռքբերում՝ «Քոնսեփթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն ՍՊԸ	-	3177.0	3177.0	6355.0	6355.0	6355.0	9532.0	9532.0	9532.0	12709.9	12709.9	12709.9	**12709.9**

Պետական մարմին
ՀՀ Էկոնոմիկայի նախարարության
Զբոսաշրջության կոմիտե
Հասցեն՝
0010 ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն
հ/հ 900011010379
ՀՎՀՀ 02698604
Գլխավոր քարտուղար՝
Կարեն Սարգսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կազմակերպություն
«Քոնսեփթ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն
Հասցեն՝
ՀՀ, ք.Երևան, Վ. Անտառային փ., 11 շ.,
8 տարածք
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
հ/հ 1930044795910100
ՀՎՀՀ 00118447
Գլխավոր տնօրեն
Անգինե Փրամզյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 4
2023 թ. 02 17 -ին

կնքված N 64-23 պայմանագրի

ԱԿՏ N

Կազմակերպություն	Պետական մարմին
«Քոնսեփթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Վ. Անտառային փ., 11 շ., 8 տարածք «Կոնվերս Բանկ» ՓԲԸ h/h 1930044795910100 ՀՎՀՀ 00118447	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտե Հասցեն՝ 0010 ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն h/h 900011010379 ՀՎՀՀ 02698604

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____»20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված _____ հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	Անվա-նումը	Գործա-ռույթի համառոտ նկարա-գիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմա-նագրի	Փաստա-ցի	ըստ պայմա-նագրի	Փաս-տացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
---	---
ստորագրություն ազգանուն, անուն	ստորագրություն ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 5

2023 թ. 02 17 -ին

կնքված N 64-23 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Armenia.travel կայքի տեխնիկական սպասարկում և ղեկավարում՝

1. Նախագծի տեղադրման համար Դիջիթալօուշն (Digitalocean) հարթակից սերվերի ձեռքբերում, որի անհրաժեշտ պարամետրերն են՝
   - *Օպերատիվ հիշողություն 16GB*
   - *Պրոցեսոր vCPUs 4vCPUs*
   - *Ինֆորմացիայի փոխանակում Transfer 4TB*
   - *Հիշողության կոշտ SSD 50GB,*
2. **Վիմեո (Vimeo)** վիդեոների հարթակից պլյուս (Vimeo plus) փաթեթի տարեկան բաժանորդագրություն, որը հնարավորություն է տալիս շաբաթական 50 ԳԲ-ի վիդեո տեղադրելու համար (12 ամիս),
3. **Պլեսկ (Plesk)** սերվերի մենեջմենթի համար նախատեսված համակարգի վեբ ադմին էդիշըն (Web Admin edition) փաթեթի տարեկան բաժանորդագրություն, (12 ամիս),
4. Դոմեյն տարեկան վճարում Նետիմ (Netim) ընկերությանը (12 ամիս),
5. Մեյլչիմփ (Mailchimp) թվային մարքեթինգային գործիքի ստանդարտ (Standart) փաթեթի բաժանորդագրություն 6000 էլ. նամակների միաժամանակյա ուղարկման հնարավորությամբ (12 ամիս),
6. Քյու ար թայգր (QRTIGER) QR կոդերի գեներացման թվային հարթակից Advanced փաթեթի բաժանորդագրություն 200 դինամիկ/փոփխվող QR կոդերի գեներացման հնարավորությամբ (12 ամիս),
7. Գուգլ ուան (Google one) ամպային սերվերի պրեմիում (premium) փաթեթի բաժանորդագրություն 2 Tb հիշողության հնարավորությամբ (12 ամիս),
8. Քլաուդֆեիր (Cloudfare) անվտանգության համակարգի կցում

   Կայքի սպասարկման ծառայություն, այդ թվում՝
   - *Կայքի տեխնիկական սպասարկման ծառայություն*
   - *Կայքի անխափան աշխատանքի և որակի հսկողություն*
   - *Կոնտենտից առաջացած սխալների հայտնաբերում և ուղղում*
   - *Բրաուզերների (Browsers: Chrome, Safari, Firefox) թարմացման հետևանքով առաջացած սխալների հայտնաբերում և ուղղում*
   - *Սերվերի ընթացիկ աշխատանքի արդյունքում առաջացած սխալների հայտնաբերում և ուղղում*
   - *Կայքի ամենամսյա արխիվացում և պահպանում*
   - *Անհրաժեշտության դեպքում պահոցում առկա արխիվի վերականգնում*
   - *SSL սերտիֆիկատի տեղադրում*
   - *Կայքի ամսական վիճակագրության տրամադրում*
   - *Cloudflare համակարգի կցում կայքին, որը ապահովում է որոշակի անվտանգության պայմաններ*
   - *Կայքի ֆունկցիոնալ մասերի ստուգում և խնդիրների դեպքում դրանց լուծում*

   Կայքի բովանդակության տեղադրման և փոփոխության ծառայություն այդ թվում՝
   - *Ամսական 5 էջերի բովանդակության փոփոխություն (12 ամիս)*
   - *Ամսական 5 նոր տրված հոդվածների տեղադրում (12 ամիս)*
   - *Ամսական 10 նոր տրված միջոցառումների տեղադրում*
   - *Ամսական 10 բլոգ հրապարակումների տեղադրում (12 ամիս)*
   - *Նոր կամ փոփոխված կոնտենտի մեջ առկա նկարների և վիդեոների մշակում և օպտիմիզացիա (12 ամիս)*
   - *Ըստ անհրաժեշտության հոդվածների, միջոցառումների բլոգ հրապարակումների հեռացում:*

Պետական մարմին	**Կազմակերպություն**
ՀՀ էկոնոմիկայի նախարարության	«Քոնսեփթ» սահմանափակ
Զբոսաշրջության կոմիտե	պատասխանատվությամբ ընկերություն
Հասցեն՝	Հասցեն՝
0010 ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	ՀՀ, ք.Երևան, Վ. Անտառային փ., 11 շ.,
Կենտրոնական գանձապետական	8 տարածք
գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
h/h 900011010379	h/h 1930044795910100
ՀՎՀՀ 02698604	ՀՎՀՀ 00118447
Գլխավոր քարտուղար՝	Գլխավոր տնօրեն՝
Կարեն Սարգսյան	Անգինե Փրամզյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2

«1-23zb» ծածկագրով

դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու **«Քոնսեփթ» ՍՊԸ**

Ծրագրի անուն «ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ»-Ի ԿՈՂՄԻՑ «ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ

Ծրագրի տևողություն **01/01/2023 - 25/12/2023**

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Տոկոս	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Տոկոս ընդհանուրի մեջ
	Աշխատավարձ						
Ա							
1.1	Motion designer	1,50923	ժամ	200	663	132600	1,04328
1.2	Video editor	2,26385	ժամ	300	663	198900	1,56492
1.3	Graphic designer	2,54100	ժամ	250	893	223250	1,75650
1.4	Photo editor	2,54100	ժամ	250	893	223250	1,75650
1.5	UX/UI designer	9,69735	ժամ	300	2840	852000	6,70343
1.6	Next js developer	28,9281	ժամ	600	4236	2541600	19,9970
1.7	React js developer	19,2854	ժամ	400	4236	1694400	13,3313
1.8	Laravel developer	11,2236	ժամ	300	3287	986100	7,75851
1.9	Content manager	2,26385	ժամ	300	663	198900	1,56492
1.10	Sis admin	14,4640	ժամ	300	4236	1270800	9,99850
1.11	Art director	1,50923	ժամ	200	663	132600	1,04328
1.12	QA	1,88654	ժամ	250	663	165750	1,30410
1.13	Project Manager	1,88654	ժամ	250	663	165750	1,30410
	Ընդամենը Ա					**8785900**	**69,12642**
Բ	**Ծրագրային ծախսեր**						
2.1	Digitalocean	68,4684	Ամիս	12	152000	1824000	14,3510
2.2	Vimeo	4,50450	Ամիս	12	10000	120000	0,94414
2.3	Plesk	2,25225	Ամիս	12	5000	60000	0,47207

2.4	Դոմեյն տարեկան	0,45045	Հատ	1	12000	12000	0,09441
2.5	Մեյլչիմփ (Mailchimp)	4,50450	Հատ	12	10000	120000	0,94414
2.6	Քյու ար թայգր (QRTIGER)	1,80180	Հատ	12	4000	48000	0,37765
2.7	Գուգլ ուան (Google one)	2,25225	Ամիս	12	5000	60000	0,47207
2.8	Քլաուդֆեիր (Cloudfare)	4,50450	Ամիս	12	10000	120000	0,94414
2.9	Adobe	11,2612	Ամիս	12	25000	300000	2,36036
	Ընդամենը Բ					**2664000**	**20,9600**
Գ	**Գործուղում**						
3.1							
3.2							
	Ընդամենը Գ						
Դ	**Վարչական ծախսեր**						
4.1	Շահույթ	100	Ամիս	12	105000	1260000	9,91353
	Ընդամենը Դ					**1260000**	**9,91353**
	Ընդամենը					**12709900**	**100**

«Քոնսեփթ» ՍՊԸ, տնօրեն՝ Անգինե Փրամզյան

Կ. Տ.